

## ԳԼՈՒԽ ԻՉ ՏՈՒՐԵՎԱՌ

Նոյն սենեակին մէջ, ուր տեսանք մենք առաւօտուն Գուրգէն արաբացի, կատաղի կնոջ սպառնալեաց մատնեալ, երեկոյին Նոյն բազմոցին վրայ Օմար բանտապետին հետ նստած՝ դարձեալ արաբացի կին մը կը խոսեր ընտանեբար: Գեղեցիկ եւ երիտասարդ էր սա, իր նշածել աչքերը հրապուրիչ քաղցրութիւն ունէին, եւ այնպիսի նայուածքի նրբութիւն, որ կարելի չէր խարդախութիւն չի համարել այդ քովնտի եւ գաղտնի ակնարկին մէջ սուր դիտողութիւնը, որով կը ջանար իմանալ թէ իւր խօսքերն ի՞նչ ազդեցութիւն կ'ընէին իր էրկան վրայ, վասնզի այդ կինը Օմարի կինն էր:

– Բայց կին, դու ինձ ի՞նչ կ'առաջարկես. յիտուն Ոսկին ես էլ գիտեմ թէ լաւ բան է, բայց ամիրապետին հետ դիւրի՞ն բան է խաղալ այդ Տիկինը սովորական կին մը չէ, կ'երեւայ թէ մեծ ազդեցութիւն ունի նաեւ Բաղդատ:

– Ի՞նչ, ամիրապետե՞ն կը վախես, ամենեւին հոգ մ'ըներ, գլուխդ ողջ մնա, ամիրապետը՝ քեզի օրեր, վախճաներ է:

– Սուտերով զիս խաբե՞լ կ'ուզես, յիմար կին...

– Ինչպե՛ս սուտ. երեկ առաւօտ բոլոր խոյի մէջ տարածուեցաւ համբաւը. եթէ ինձ չես հավտար՝ հարցուր ջորեպանին եւ մեր սպասաւորին, որ զիս բերին. եթէ այդ դիպուածը չլինէր միթէ՞ ես թէթէ կերպով յանձն կ'առնուի զքեզ այսպիսի անխոհեմութեան յորդորելու: Այսպիսի վիճակէ օգուտ քաղելու է, իմ սիրուն երիկս, երկու-երեք տարուան մէջ այդչափ գումար երբեք դու չես կրնար աւելցնէր այսպիսի բանտապանութեամբ: Եկ դու իմ խօսքս մտիկ ըրէ, միթէ՛ ես քու թշնամիդ եմ, որ վտանգաւոր բան քեզ առաջարկեմ: